

891.99  
5-19

Գ. ՄԱԶԱՐԻ  
Մ. ԱՐՄԵՆ

ՅԵՐԿՈՒհ  
—  
— ՄԱՅՐ

891.99  
Մ-19

ՅԵՐԵՎԱՆ 1927.

6 NOV 2011

Գ. ՄԱԶԱՐԻ  
ՄՈՐՍ ՆԱՄԱԿ  
Մ. ԱՐՄԵՆ  
ՄՈՐՍ ԿԱՐՈՏԸ

391.99  
5-19 ար

162

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ՅԵՐԱԿԱՆ ՄԱՅՐ

2255  
2255  
0 1



ՅԵՐԱՎԻՆ, 1927.

21 JUN 2013

41588

Հ. Պ. «ՆՈՅԵՄԲԵՐ»  
ՄԻԱԿԹՅԱՆ

Ա 578-55

Դրառնագալ № 866թ.

Տիրամ 1000.

Տպարան «ՀԵՐՄԵՍ» Հրատարակչ. Յերևան, Մարքոսի փող. № 29.

## ՄՈՐՄ ՆԱՄԱԿԸ

Կարսող ես այս անգամ ել չլսել մնըըդ,  
Կարսող ես արհամարել իմ նամակը,  
Առանց այն ել սիրաւ անամնք ե,—  
Վոսկորին ե հասել զանակը...

Սիրելի իմ Գուրիս, արդեն ձմեռ ե ցուրտ,  
Ու հողմը վշտուտ յերգում ե դաշտերում,  
Բայց յես հավատում եմ վոր մի որ կզաս դու,  
Դժվար ե կորուստիդ մտքի հետ հաշտվելը...

Սուրենը հիվանդ եր, ու սուր ել հոգում եր,  
Թողեց տպարանը, թողեց ուսում,  
Ես ցրտին որերին նու արև յերազում եր,  
Ու Սոցապը նրան ուղարկեց Ասւխում:

Իսկ փոքրը, — Խորենը զըսւմ ե շարունակ,  
Ամոքում ե սիրաս սրտալի խոսքով.  
— Սիրելի իմ մայրիկ, յերբ բացվի զարունը,  
Կը զըեմ, յեկ ինձ մոտ, Մոսկով...

Յերկու յեղայրներդ ել չարքաշ բանվորներ են,  
Դատում են որական ութ ժամ,  
Ճակատի քրտինքով պահում են իրենց մոլը,  
Յես արդեն հիվանդ եմ, ուժատ...

Իսկ դու մւմն ես, լինչ ես, ինչին ես ծառայում,  
Սիրելի իմ Գուրիս, և մւր ե քո բունը,  
Մինչեւ յերբ յեսից վար հոսե քո առուն,  
Զե՞ վոր դու քո տան տերն ու հարկատուն ես...

Այսակղ դու կարող ես ծառայել բանկոպում,  
Կամ լինել հայտուում հաշվետար, —  
Վոր շինես հայրական հյուրընկալ քո տունը,  
Վոր բախտի լինի անվիթար:

Դրկիցները քեզնով ինձ յերնեկ են տալիս,  
— Բանաստեղծ ե զավակի, նրան ճանաչում են,  
Կարգում են նրա յերգերը սրտալի,  
Ու համբավը նրա որ սրին աճում է:

Հետո յել լսեցի մութ բաներ քո մասին,  
Վորսես թե սիրածդ մեռել ե...  
Քիչ ել դժւ յես մեռել... թէ կարծեմ միասին...  
Գուրիս իմ, սիրելի, սիրելի...

Ինչպէս վարվի մայրդ, ինչու, ի՞նչ պատահեց,  
Աղջիկ եր պակասում քեզ համար.  
Ինչից ես դժգոհում, ինչու յես կատաղել,  
Ապրել ես դեռ քանի ամառ...

Իսկ կարոն, ընկերդ, որորին բացվում ե,  
Դարձել ե գործկոմի աչքի լույսը,  
Վանքի պես լեցուն խնդում ե նրա տունը,  
Սիրելի իմ Գուրիս, լսում ես...

Եպուց ել կը բերի լուսնի պէս մի աղջկա,  
Վոր իր մոր ձեռներին ջուր լեցնի,  
Կապրեն միասին, յերջանիկ, անչկա,  
Հարգանքով, սիրով փոքրի ու մեծի...

Իսկ դու դարձել ես թափառիկ հրեա,  
Իսկ դու մխսում ես ինչպես հանդիպի,  
Սիրելի իմ Գորիս, մինչև յերբ քո մայրը  
Նայի կայարանի ամայի ճամբին...

Արդեն ձմեռ ե, ցուրտ, գնել եմ տաս փութ փայտ,  
Նստում եմ կրակի գեմ, կարում ու հաշվում,  
Վոտքիս տակ մոռում ե մեր կատուն կարմրախայտ,  
Իսկ բուքը վշտոտ կաղկանձում ե դաշտում...

Իսկ բուքը ծեծում է ձյունածածկ պատերը,  
Մլավում է անտեր դռների վրա,  
Սիրելի իմ Գուրիս, մինչև յերբ իմ սերը  
Սըտիդ դուռը թակի այն բուքի նման...

Մի որ ել յես կարող եմ ընկնել անկողին,  
Ու մեռնել մայրական իղձերս անկատար,  
8 Հոկ կատուն կլինի հուղարկավորն իմ,  
Ու հողմը կանե պատարագ...

Ճայց յես հավատում եմ վոր մի որ կզան դու,  
Դժվար ե կորուսիդ մաքի հետ հաշտելը,  
Սիրելի իմ Գուրիս, ձմեռ ե աշուն, բուք,  
Ու հողմը վշտոտ յերգում ե դաշտերում...

Ու հողմը ցըտաշունչ դաշտերի վրա  
Մարքում ե ձյան պատույտ, չարքի հարսանիք,  
Բարդենին յերգում ե վորպես քահանա,  
Մեկը վոլորում ե ինչ վոր պարսատիկ...

Սիրելի իմ Գուրիս, տուն դարձիր, հերիք ե,  
Ել հերիք ե միսես որերդ անզին,  
Մինչև յերբ, մինչև յերբ կարոտած մայրիկդ  
Նայի կայարանի ամայի ձամբին...

## Հ ԻՄ ՊՈ.ՏԱ.ՍԻԽԱՆԸ

Անուշիկ իմ մայրիկ, ստացա նամակդ,  
Վոչ միայն յես, սիրտս ել կարդաց,  
Զգիտեմ ինչպէս քո ցաված սիրտն ամոքեմ,  
Ինչպէս արդարանամ վոր լինեմ արդար...

Գինի շատ եմ խմել, սիրելուց,— չկարծես,  
Ինչից են վորոտում ամպերը...  
Յես այնքան ցավել եմ, վոր պոետ եմ այսպես...  
Ցավել ու ցավով հարբել եմ...

Անուշիկ իմ մայրիկ, սիրելի իմ պառավ,  
Այդ վոչ սեր ե, վոչ մահ, վոչ կօրուստ,  
Մեանում ե սրտիդ մեջ վիրավոր մի վարազ,  
Մի ձանկ ել ուղեղդ ե փորում...

Զգիտեմ այդ ինչպէս, այդ ինչպէս պատահեց,  
Յես այնքան, այնքան խորն ընկա,  
Մի որ ել վերցրի սպիտակ պատանը,  
Հիմա այդ ամենքին թքած...

Թժվար ե, շատ դժվար, խղճահար եմ, ներիր,  
Յես այնքան շատ բանի զիջել եմ...  
Զե վոր իմ հույզերը գանգրահեր ելին,  
Թանգրահեր՝ ինձ նման՝ և տենչերս...

Մուսիայում յեղել ե մի պոետ ինձ նման,  
Նրանից, ի հարկե, յես վոքը յերդահան եմ,  
Բայց յեղել ե մի բան նման անսահման,  
Հարբելում—շատ մոտիկ հարևան ենք մենք...

Նա կախեց ինքն իրան... ախ, մեր մոլորակում  
Մոլորված հոգիներ շատ կան դեռ...  
Նա կտրեց դանակով իր զարկերակը...  
Յես նրան շատ եմ խանդել...

Բայց ինչու յեմ գրում յես քեզ այս ամենը,  
Միւնույն եր, յեթե կախվեյի,  
Դու պիտի կարծեյիր վոր այն «սրտամեռ»-ն եք  
Վոր քշեց ինձ կյանքի թաղերից...

Ո՛, վոչ, վոչ, քն մեջն ե, նրանից չես փախչի,  
Կորքան ել հանդիմանես քեզ,—  
Հետո այն վերածվում ե աղջկա կամ թախծի,  
Աչքերը գերեզմանի պես...

Այսպես ել պատահեց, ով եր նա—մի թիթեռ,  
Մեղքամոմից սարքած մի արձան,  
Դրանից եր վոր իմ որոնի թարսմ թերթերը  
Սմբեցին ու քնկան ցած...

Այդ ամենը հիմա մի անդարձ անցյալ ե,  
Սիրելի, սիրելի մայրիկ,  
Նոր խինդով այս գարնան վարդեր կը բացվեն,  
Ու հովը կերպի անտառից...

Դեռ ինձ շատ հարկավոր ե հեռու թափառելը,  
Դեռ ինձ շատ հարկավոր ե բարձրանալ ներքեւ,  
Անցյալում յես այնքան էլլակներ մարել եմ՝  
Ու բացել վոտներիս այնքան վերքեր...

Ու հիմա զնում եմ կաղ վոտով, բայց համառ,  
Ու շփում ծնկներիս արնոտ մորթին, —  
Դեռ ինձ շատ հարկավոր ե մնալ անմայր  
Վոր լինեմ յերկրիս արժանի վորդին:

Միլիոն անմայրերի հետ մենք նորն ենք կառուցում,  
Միլիոնով միասին մենք կյանքը հրաւմ ենք  
Փշում ենք գետերի կաշկանդող սառուցը  
Վորպեսզի բերենք կոմունը:

Խորենը Մոսկովում կոմյերիտ բանվոր ե,  
Գրում ե նամակներ, ամսոքում քեզ...  
Դեռ յես շատ պետք ե փոքրանամ քան վոր եմ,  
Վորպեսզի դառնամ նրա չափ մեծ...

Սիրելի իմ մայրիկ, դու ապրիր քեզ համար,  
Ինչպես վոր ապրել ես մինչև հիմա, ✓  
Յես հիմա ունեմ մայրեր անհամար,  
Վորքան ել լինեմ անոթեվան...

Դեռ յերկար յես պիտի մնամ առանց քեզ,  
Դեռ յերկար պիտի լինեմ անհանգիստ,  
Մինչև վոր նորողվեմ, մինչև վոր լինեմ յես,  
Արժանի վորդին իմ համայնքի»:

Գրում եմ, հիշում եմ մեր բակը, տունը,  
Ու մոքա՞ գլխիկոր սեմին նստած,  
— Սիրելի իմ մայրիկ, զսպիր բարկությունդ,  
Մի որ յես յես կգամ, բայց արդեն վստահ...

Թող հողմը կտղկանձե ու խտոնե դեղերը,  
Թող վոռնա պտտարագ ու ծեռ.—

Յես քեզնից հեռացա սպիտակ մազերով,  
Հետ կգամ պիոներ վորովես...

10. XI—25 թ.

10. XI—26 թ.

## ՄՈՐՍ ԿԱՐՈՏԸ

### 1

Մայրս գյուղացի յեր, մի հեռավոր գյուղից,  
Յեկել եր քաղաք նա, ամուսնացել,  
Քաղաքումն եր տպրում սկսած են որից,  
Են որից նա գյուղ չեր գնացել:

Պատահում եր մերթ-մերթ, վոր տիրում եր մայրս,  
Մայրս դեռ մայրական իր գյուղն եր հիշում.  
— Այնտեղ հիմի լավ ե, գեղեցիկ ե այնտեղ,  
Այստեղ քաղաքն ե ծանր ու մշուշ:



Կ 578-55

Վորքան կարստցել եմ, ասավ նա մի որ,  
Մեր լեն դաշտերին, աղբյուրին, ջրին,  
Իրիկվա շողերով հսնդից տուն դարձող  
Գյուղի բազմաբառաչ նախիրին:

Վորքան կարստցել եմ մեր լույ, ցերեկներին,  
Մեր բարձր սարերին, ձորերին խոր,  
Գյուղացի չես վորդիս, բայց մորդ ներիր,  
Այստեղ շատ աղմուկ ե ու ժխոր:

Մեր կանաչ դաշտերում գույնզգույն ծաղիկներ,  
Վերեռում արեը, ներքեռում գոլ,  
Գնում ենք թրվոուն, դեպի սարն ի վեր,  
Անուշ գյուղական յերդով:

Ենմից մուտենում ե աղջիկների խումբը,  
Հանգիսպում ենք իրար գեղջկուհու խինդով,  
Գույնզգույն զգեստներով ծածկում ենք թումբը,  
Ողբ լցնում ենք ծիծաղի թինդով:

Յեզ անհայտ մի սարի մի անհայտ լանջին  
Մենք պար ենք բոնում զվարթագին,  
Այսպէս քաղցր են հնչում մարդու ականջին,  
Այսպէս զվարթացնում են հոգին...

## 2

Գյուղում ձյուն ե, ձմեռ, արեը փայլում ե,  
Կիրակի յե ուրախ, որն ե բացվում գեղին,  
Ճերմակ կալերի մեջ հավաքվում են մարդիկ,  
Զրուցի յեն բոնվում, խոսում գեսից, գենից:

Կոճիները առած, մանուկներն են վագում,  
Խաղալու ուրախ կոճախաղի,  
Հանկարծ բարակ ձայնով, ձայնով իր նվազոն,  
Գյուղական զունան ե զլում մոտիկ թաղից:

Պսակում են այնտեղ այսինչի աղջկան,  
Տանում են հեռու տեղ, հեռու, հեռու մի զյուղ,  
Ու նորից զլում ե գհոլը գյուղական,  
Ուրախ ձայնով լցնում դաշտեր, կալեր ու հյուղ:

Հավաքվում են մարդիկ լենսիրտ հարսանիքին,  
Զիկ զլում ե զունան, դհոն ե գրմբում,  
Իսկ դիմացի թաղից, կանգնած տան տանիքին  
Պառավեր ու ծերեր հարսնիքին են նայում:

Մոտիկ զյուղից յեկած դհոլ խփող ուստան,  
Լայն փափախը դրած, փաթաթված բաշլուղով,  
Բեխերից կախ արած սառուցի շարանը՝  
Զլել ե յեղի մի զիկ, ոլապենական ու խոր:

Ինձ համար ել յեղավ այսպիսի հարսանիք,  
Ինձ ել զյուղից վերցրին ու բերեցին քաղաք,  
Վորդիս, վատ ե այստեղ, վատ ե քաղաքը լայն,  
Հազար հնչյուն ունի, հազար զիկ աղաղակ:

Նա պատմում եր ելի, իսկ յես չեցի զգում,  
Զեյթ զգում նըան, նըա կարստը վառ.  
— Ակը ինչ էա այնտեղ, ինչն ե այգին հուզում,  
Կամ ինչու յես առնջգում եղ հին զյուղի համար:

Իսկ նա դեռ հիշում եր, մտածում եր նա դեռ,  
Յես գուրս եյի զնում դեպի մոտիկ այդին,  
Մայրս դեռ հիշում եր, մայրս մըմնջում եր,—  
Ո՛, հեռավոր իմ գյուղ, գյուղ իմ անուշ, անդին...

Բարձրանում եր մայրս մեր տանիքի վրա,  
Ու նայում եր հյուսիս, և վորպես փոկ գոներ,  
Զգվում եյին նրա խոր հայացքի դիմաց՝  
Գեղջկական պար բռնած լեռները:

Յերկնքին եր նայում,—հեռվում ամողեր կան սեր,  
Շուտով կարկուտ կղա իմ լավ գյուղի վրա,  
Ամպերն ելի հեռվում դիզվում եյին դեղ-դեղ,  
Ահարեկված մայրս դեռ նայում եր նրանց:

Խաչը դուրս կհանեն, կանեն թափոր հիմի,  
Ամպերը կգոռան կարկտարեր ու չար,  
Խաչը դուրս կհանեն, կանեն թափոր նորից,  
Կարկուտն անձրկ դառած՝ սելավ կթափի վար:

Բայց յես ելի, ելի չեյի զգում նրան.  
— Ախը ի՞նչ կա այնտեղ, ախը ի՞նչ կա այնտեղ,  
Ի՞նչ կա սրտի մոտիկ կամ սիրելու համար,—  
Այնտեղ աներ կան ցած ու գեղնավուն հանդեր:

Կարելի յե գնալ, գյուղը փոխել նորի,  
Այնտեղ նոր կյանք տանել տրակտորին բարձած,  
Կամ ուղարկել այնտեղ կարմիր զինվորներին,  
Բանակի ծառայությունից դարձած:

Նրանք ու յես այնտեղ պիտի անենք շատ բան,  
Մինչև գյուղը դառնա սրտի համար անուշ,  
Թե չե ինչը սիրել այդ գյուղերից հնցած,  
Հյուղակներից հողե և արորից անուժ:

Ու յերբ յերկաթ հազնի գյուղը վատից զլուխ,  
Ու յերբ արդեն արտել դառնան խրճիթ ու տուն,  
Ինձ ել պիտի թվա գյուղը չքնաղ, անուշ,  
Պիտի ապրի գյուղը, — եդ հորը իմ սրտուժ:

Հենց դրա համար ե, վոր բոլորս մեկտեղ  
Գյուղ ենք գնում, հիմքից փոփոխելու նրան,  
Մայր, թնդ հին հուշերդ, ախր ինչի յեն պետք,  
Վոր պահում ես նրանց դեռ քու հոգու վրա...

Արեր անցան կրկին, ու իմ մայրս ահա,  
Գյուղացիական յերկրի կարոտով մի անհուն,  
Դեպի եղ հին, խարխուլ գյուղը ճամբա ընկավ,  
գնում եր նա հեռու, գնում եր հորանց տուն:

Նորից հիշեց գյուղը, նորից պատմեց մի քիչ,  
Ու նստելով սայլին, ճամբա ընկավ դանդաղ.  
— Մայրս, հինն ես ելի, դու միենույնն ես ընդմիշտ,  
Յեկ սիրտդ կրծում ե նույն կարոտը անթաղ:

Նա կնում եր սայլով, հեռանում եր սայլով,  
Հասնում եր լեռներին, վոր բոնել են շուրջպար,  
— Դեպի ձեզ եմ գալիս անհուն մի կարոտով,  
Լեռներ, եյ փակ գոներ, բաց արեք ճառապարհ...

Սերունդներ ենք տարբեր, ձգտումներով տարբեր,  
 Յես զնում եմ դեպի քաղաքն աղմկահույզ,  
 Յես հասնում եմ արդեն, յես նորով եմ հարբեր,  
 Իսկ դու դեռ սիրում ես կորցրած հին պյուղդ կույս  
 Ի՞նչ ես փնտում եղտեղ, ի՞նչ ես կորցրել անհետ,  
 Յեխող նորի դիմաց հինն ես ուզում ելի,  
 Բայց հինը ջարդվել ե, հինը ջախջախվել ե,  
 Յերկաթն սպանել ե փայտե սելին:

Յես քաղաքում նորն եմ փնտրում, վոր ծլում ե,  
 Իսկ դու պյուղում հիմա պրպտում ես հինը,  
 Դու չես տեսնում վառման արեի ցոլումը,  
 Փնտրտուքդ իզուր, հին ե, հին ե, հին ե...

Վերադառնում եյի դործարանից յես տուն,  
 Ամեն որվա պես լուս, բայց զվարթուն ելի,  
 Մեր դռան մոտ կանգնած մի սել երիտում,  
 Ու մայրս իջնում եր եղ դյուդական սելից:

Մոտ վազեցի նրան. տեսար գյուղը, տեսար,  
 Այստեղ ի՞նչ կար անուշ, այստեղ ի՞նչ կար չքնտղ.  
 Վորպես խոր մի ձորից, մայրս ձայնեց տխուր,  
 Դու ձիշտ եյիր տում, վոչինչ, վոչինչ չկա:

Քանդոտել են տուն, են գեղեցիկ տուն,  
 Փորել են նեղ մի հուն, ենտեղով ե հոսում,  
 Նվազել ե տուն, իմ գեղեցիկ տուն,  
 Ել ջրերը տյնողես զվարթուն չեն խոսում:

Գյուղում շատ բան չկա, վոփոխվել ե շատ բան,  
Շատ տներ են քանդվել ու շինվել նոր տներ,  
Իսկ դեպի դաշտ տահող մեր այն փոքրիկ ճամբան,  
Դարձել ե քաղաքի փողոցների պես լեն:

Նույնիսկ մամոստ քաքը չկա ճամբամիջի,  
Վորի վրա նստած լաց եմ յեղել յերկար,  
Վորի վրա նստած, ճամբույրներով վերջին,  
Յես ու այն լավ տղան հրաժեշտ տվինք իրար:

Ո՞վ զիտե, վոր շենքի մռայլ պարսպի մեջ,  
Պարսպաքար ե դարձել իմ լավ սիրո վկան,  
Յեվ տանիքի ճամար չոր տախտակ են դարձել  
Այն ծառերը ծանոթ, վոր այլոս չկան:

Մի մեծ շենք են շինել գյուղի հենց մեջտեղում,  
Քաղաքի տան նման քարաշեն ու մեծ տուն,  
Խրճիթները նրա տեսքից շատ են նեղվում,  
Ամաչում են կարծես իրենց դեմքից անդուր:

Կար ժամանակ, վոր այդ ու շենքի փոխարեն  
Մի խրճիթ եր կանգնած, պալենական ու հին,  
Այն շենքի պատի տակ ինչքան ենք խաղ արել  
Յես ու իմ մեռած ընկերուհին...

Գիքո ամին ախուր, իր դուքանի դռան,  
Դուքանի դուռը փակ, ել մուշտարի չկա,  
Նոր խանութ ե բացվել, ցուցանակը վրան,  
Կոսպերատիվ խանութ, քաղաքից գյուղ ընկած:

Ալսր ափսոս չե՞նա, զյուղի Գիքո ամին,  
Թութուն անգում չաւնի իր չիբուխի համար,  
Յես նորից հիշում եմ անցած հին որերից,  
Գիքո ամին նստած իր դուքանի դռան:

Փոքրիկ աղջիկ եյի, ինձ հետ մի քանի ձու,  
Գնում եյի դուքան, առնելու կոճ, ասեղ,  
Գիքո ամի, գլխիդ յեկել ե ցավ ու ձյուն,  
Ել ի՞նչ պատմել, վորդիս, կամ թե ել ի՞նչ տսել...

6

— Ո մայր, վորքան հին ե այդ գեղջկական հողիդ,  
Վորքան ատում ես դու բարձրացող նոր զյուղին,  
Բայց դեռ քիչ ե արված, բայց դեռ զյուղը կը մանի  
Քաղաքների հոկան, յերկաթուղին:

Հակ հետո կմանի մի ուրիշ մեքենա,  
Վողջ յերկաթ միայն ու չոր չուզուն,  
Հակ հետո դեռ վորքան պիտի բարձրանան  
Գյուղի մեջ քարաշեն, մեծամեծ տուն:

Դու ատում ես նորը, սրտով հնի հետ ես,  
Դու սիրում ես չութը, կալը, հյուղը ու կամ,  
Բայց վերելքում այս նոր, արդյոք մայր իմ, գիտես,  
Վոր բացվում ե գյուղե այս աշխարհի վրա  
Արեգակը պրոլետարական...



ԳԻՆԸ 20 ԿՈՊ.



ԳԻՐՔԸ ՏՐՎԱԾ Ե ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ „Ն Ո Յ Ե Մ Բ Ե Ր“ ՄԻՈՒԹՅԱՆ ՈՐՈՔ, ՆԱԽ ՔԱՆ  
Հ. Պ. Գ. ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՎԵԼԸ

ՀՀ Ազգային գրադարան



NL0355195

41588